«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»
ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետ,
ոստիկանության գեներալ-մայոր
_____ Մ. Բաբայան
« 18 » ____01____ 2021 թ.

ԿԱՐԾԻՔ

Առաջատար կազմակերպության՝ ՀՀ ոստիկանության կրթահամալիրի՝ Քրիստինե Ստեփանի Բեգլարյանի՝ «Մարդու իրավունքների պահպանության ոլորտում պետության իրավաստեղծ և իրավակիրառ գործունեության տեսաիրավական հիմնախնդիրները (ցեղասպանության դեմ պայքարի համատեքստում)» թեմայով ԺԲ.00.01 - «Պետության և իրավունքի տեսություն և պատմություն, պետական և իրավական ուսմունքների պատմություն» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի պետության և իրավունքի տեսության և սահմանադրական իրավունքի ամբիոնը, մասնակցությամբ՝ իրավաբանական գիտությունների թեկնածու Ռ. Ռ. Մարանդյանի, իրավաբանական գիտությունների թեկնածու Վ. Հ. Սայադյանի, իրավաբանական գիտությունների թեկնածու Ա. Ա. Ադամյանի, Ա. Գ. Սաֆարյանի, Ա. Ս. Մարգարյանի և Մ. Բ. Մանուկյանի, քննարկեց Քրիստինե Ստեփանի Բեգլարյանի՝ «Մարդու իրավունքների պահպանության ոլորտում պետության իրավաստեղծ և իրավակիրառ գործունեության տեսաիրավական հիմնախնդիրները (ցեղասպանության դեմ պայքարի համատեքստում)» թեմայով ԺԲ.00.01 - «Պետության և իրավունքի տեսություն և պատմություն, պետական և իրավական ուսմունքների պատմություն» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունը և հանգեց հետևյալին:

Ատենախոսության արդիականությունը կասկած չի հարուցում: Ժամանակակից աշխարհում մարդու իրավունքների պահպանությունը պետության բազմաբնագավառ գործունեության շրջանակներում ձեռք է բերում առաջնակարգ նշանակություն: Ընդ որում, էապես կարևորվում են պետության իրավաստեղծ և իրավակիրառ գործունեության պատշաճ կազմակերպումն ու իրականացումը՝ որպես մարդու

իրավունքների պահպանության կենսագործման իրավական ուղիներ: Վերոհիշյալը հատկապես կարևորվում է այնպիսի հանցագործությունների դեմ պայքարի համատեքստում, ինչպիսին է ցեղասպանությունը: Անհրաժեշտ է ստեղծել պետահիրավական երաշխիքների գործուն համակարգ, որը հուսալիորեն կապահովի ցեղասպանության կանխարգելման և դրա դեմ պայքարի արդյունավետությունը և մարդու իրավունքների պահպանությունը (պաշտպանությունը): Կարևորելով նշված և այլ խնդիրների ուսումնասիրությունը՝ Հեղինակը սույն աշխատանքի շրջանակներում փորձել է իրականացնել ցեղասպանության դեմ պայքարի համատեքստում մարդու իրավունքների պահպանության ոլորտում պետության իրավաստեղծ և իրավակիրառ գործունեության տեսահիրավական հիմնախնդիրների համալիր հետազոտություն:

Թեկնածուական ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, ութ ենթագլուխ պարունակող երեք գլուխներից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից: Աշխատանքի այսպիսի կառուցվածքը, ընդհանուր առմամբ, համահունչ է այն խնդիրներին ու նպատակներին, որոնք իր առջև դրել է հեղինակը:

Աշխատանքի ներածության մեջ հիմնավորվում է հետազոտության թեմայի արդիականությունը, ներկայացվում են թեմայի գիտական մշակվածության աստիճանը, հետազոտության տեսական, նորմատիվ իրավական հիմքերը, օբյեկտը, առարկան, նպատակը և խնդիրները, հետազոտության մեթոդաբանական հիմքը, փորձառնական բազան, ինչպես նաև՝ գիտական նորույթը և պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները, հետազոտության տեսական, գործնական նշանակությունը, արդյունքների փորձարկումը և ատենախոսության կառուցվածքը:

Ատենախոսության առաջին՝ «Մարդու իրավունքների և դրանց պետական պահպանության ընկալման ընդհանուր տեսական հիմնախնդիրները» վերտառությամբ գլխում Հեղինակը ներկայացրել է «իրավաընկալում» և «մարդու իրավունքներ» հասկացությունների հարաբերակցությունը, իրավունքի կառուցվածքի ընդհանուր տեսական հիմնախնդիրները՝ իրավունքի կրողի, օբյեկտի և հասցեատիրոջ եռամիասնության համատեքստում, ինչպես նաև՝ մարդկության դեմ ուղղված հանցագործություններից մարդու իրավունքների պետական պահպանության իրավահամեմատական բնութագիրը:

Աշխատանքի երկրորդ գլխում, որը կրում է «Ցեղասպանության ծագման ուսումնասիրման գործընթացում բացահայտված մարդու հիմնական իրավունքների և դրանց պետական պահպանության էությունը և իրավական բնութագիրը» խորագիրը, լուսաբանված են մարդու հիմնական իրավունքների էությունը ցեղասպանության հասկացության, բնութագրի, առանձնահատկությունների, իրավահամեմատական վերլուծության խորապատկերում, ցեղասպանության համատեքստում մարդու իրավունքների պետական պահպանությունը միջազգային և ռուսական իրավունքում, ինչպես նաև՝ մարդու հիմնական իրավունքների պաշտպանությունը ցեղասպանության և մարդու այլ իրավունքների խախտումների օրինակով: Հեղինակն անդրադարձել է նաև ազգային փոքրամասնությունների և մշակութային ցեղասպանության ընկալման հիմնախնդիրներին՝ կարևորելով ազգային փոքրամասնությունների իրավունքների պետական պաշտպանության

անհրաժեշտությունը, մշակութային ցեղասպանության էությունը ու դրա իրավական ամրագրման նշանակությունը:

Ատենախոսության երրորդ՝ «Մարդու իրավունքների պահպանության պետահիրավական կառուցակարգերը ցեղասպանության դեմ պայքարի օրինակով» վերտառությամբ գլխում Հեղինակը ներկայացրել է պետության և միջազգային հանրության դերը մարդկության դեմ ուղղված հանցագործությունների կանխարգելման և դրանց դեմ պայքարի համատեքստում, ինչպես նաև՝ մարդու հիմնական իրավունքների պահպանության պետական երաշխիքները ցեղասպանության կանխարգելման և դատապարտման միջոցով՝ որպես համաշխարհային միջազգային հիմնախնդիր և պետության արտաքին քաղաքական գործառույթ:

Ատենախոսության եզրափակիչ մասում համառոտ կերպով շարադրված են հետազոտության կատարման արդյունքում հեղինակի կողմից արված որոշ եզրահանգումներ:

Գիտական հետազոտության վերաբերյալ ընդհանուր դրական կարծիքի հետ մեկտեղ հարկ ենք համարում ներկայացնել հետևյալ նկատառումները՝

1. Գիտական նորույթի տեսանկյունից վիճահարույց է պաշտպանության ներկայացվող առաջին դրույթը: Վերջինիս շրջանակներում Հեղինակը ուշադրություն է հրավիրում օտարերկրացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց հիմնական, հատկապես՝ հիմնական քաղաքական իրավունքներով օժտելու գործընթացում նրանց կողմից տվյալ հասարակության նկատմամբ հնարավոր բացասական ազդեցության վրա: Ուստի առաջարկում է սահմանել անհատական և համասոցիալական իրավունքների և ազատությունների այնպիսի հարաբերակցություն, որի դեպքում կապահովվի անհատի և հասարակության բնականոն գործունեությունը: Համաձայնելով վերջին պնդման հետ՝ այնուամենայնիվ, կարծում ենք, որ առաջին դիտարկմամբ բարձրացվող խնդիրը, ըստ էության, լուծված է: Պետք է նկատի ունենալ, որ պետության իրավական համակարգի շրջանակներում հիմնական (այդ թվում՝ հիմնական քաղաքական) իրավունքների ամենամեծ ծավալը վերապահվում է տվյալ պետության քաղաքացիներին, ինչը, թերևս, լրացուցիչ հիմնավորման կարիք չունի: Ուստի այստեղ հիմնական խնդիրը քաղաքացիություն շնորհելու գործընթացում պետության կողմից վերոհիշյալ հնարավոր վտանգների կանխման նպատակով իրականացվող միջոցառումների որակն ու ծավալն են: Մեր պատկերացմամբ, անկախ ներպետական լուծումների բազմազանությունից, ժամանակակից պետություններում քննարկվող հիմնախնդիրը մեծ հաշվով լուծված է:

2. Հստակության տեսանկյունից վիճահարույց է պաշտպանության ներկայացվող վեցերորդ դրույթը, որի շրջանակներում Հեղինակն ազգային օրենսդրության շրջանակներում ցեղասպանության և այլ հանցագործությունների սահմանազատման նպատակով առաջարկում է ցեղասպանության հանցակազմի տարրերի առանձնահատկությունների, հիմնական բնութագրիչների հստակ և ոչ երկիմաստ ամրագրում: Չվիճարկելով Հեղինակի դիքորոշումը ընդհանրապես՝ կարծում ենք, որ վիճահարույց է դրույթի գործնական հիմնավորվածությունը: Նպատակահարմար

կլիներ քննարկվող դրույթի շրջանակներում մատնանշել նման առաջարկի համար հիմք հանդիսացած հիմնախնդիրները, որոնց լուծման նպատակով կարդարացվեր առաջարկը: Օրինակ՝ կարելի էր ՀՀ կամ այլ երկրների քրեական օրենսգրքերի օրինակով մատնանշել ցեղասպանության հանցակազմի ամրագրման կապակցությամբ իրավական որոշակիության առկա բացթողումները և առաջարկել համապատասխան լուծումներ: Թեև հետազոտությունը կրում է ընդհանուր տեսաիրավական բնույթ, սակայն դրույթի գիտական արժեքը կբարձրանար թեկուզ հայեցակարգային մակարդակում հիմնախնդիրների և դրանց լուծումների մատնանշմամբ:

3. Ատենախոսության «Եզրակացություն» բաժնում Հեղինակը փորձել է ամփոփել հետազոտության որոշ արդյունքներ: Մեր դիտարկմամբ, սակայն, տվյալ բաժնի շարադրանքը և՛ ներկայացման մեթոդաբանությամբ, և՛ բովանդակային առումով, ըստ էության, չի համապատասխանում այդ բաժնի գործառնական նշանակությանը: Տվյալ դեպքում Հեղինակը փորձել է կատարել հետազոտության ընդհանուր ամփոփում՝ առանց մատնանշելու հետազոտության արդյունքում ձևավորված կոնկրետ, առարկայական եզրահանգումներ: Ուշագրավ է, որ աշխատանքում առկա են արժեքավոր դատողություններ, որոնք կարող էին տեղ գտնել վերոհիշյալ բաժնում՝ ի ցույց դնելով գիտական աշխատանքի իրական արժեքավորությունը:

4. Թերի է ատենախոսության գրականության ցանկի ձևավորումը: Մասնավորապես, ատենախոսության՝ «Նորմատիվ իրավական և դատական ակտեր» և «Այլ գրականություն և էլեկտրոնային ռեսուրսներ» բաժիններում առկա են համակարգման խնդիրներ: Նպատակահարմար կլիներ աղբյուրները դասավորել՝ համաձայն գրականության ցանկի տվյալ բաժնի անվանման՝ ապահովելով միասնական մոտեցում: Բացի այդ, «Նորմատիվ իրավական և դատական ակտեր» բաժնի 31-րդ կետում Հեղինակը, որպես նորմատիվ իրավական ակտ, ներառել է իրավական փաստաթղթի նախագիծ, որը, մեր դիտարկմամբ, հիմնավորված մոտեցում չէ: Նշված բաժնի որոշ աղբյուրների (40-43-րդ աղբյուրները) կապակցությամբ ներկայացված էլեկտրոնային հղումները չեն ապահովում արժանահավատություն առ այն, որ Հեղինակն օգտվել է տվյալ նորմատիվ իրավական ակտերի պաշտոնական թարգմանություններից, իսկ որոշների (օրինակ՝ 44-րդ աղբյուրը) պարագայում նշված չէ պաշտոնական սկզբնաղբյուրը: Գրականության ցանկի «Գիտական գրականություն» բաժնում ներառված ոչ բոլոր աղբյուրների դեպքում են նշված դրանց հրատարակչության և էջերի ընդհանուր քանակի վերաբերյալ տվյալները: Նպատակահարմար կլիներ, որպեսզի Հեղինակը ներկայացներ հիմնավորումներ նաև այն մասին, թե «Այլ գրականություն և էլեկտրոնային ռեսուրսներ» բաժնի որոշ աղբյուրներ (օրինակ՝ 186-րդ, 187-րդ, 191-րդ աղբյուրները) ինչու՞ են ներառվել վերոհիշյալ բաժնում, այլ ոչ թե՝ «Գիտական գրականություն» բաժնում:

Ներկայացված նկատառումները կրում են մասնավոր բնույթ և չեն արժեզրկում ընդհանուր առմամբ հաջողված ատենախոսությունը, պայմանավորված են աշխատանքն առավել որակյալ տեսնելու ցանկությամբ:

Հետևություն. «Մարդու իրավունքների պահպանության ոլորտում պետության իրավաստեղծ և իրավակիրառ գործունեության տեսաիրավական հիմնախնդիրները (ցեղասպանության դեմ պայքարի համատեքստում)» վերտառությամբ թեկնածուական ատենախոսությունը գիտական նորույթ պարունակող, ինքնուրույն, ավարտուն գիտական աշխատանք է, որը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թ. օգոստոսի 8-ի թիվ 327 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգ»-ով նմանատիպ աշխատանքներին ներկայացվող պահանջներին, իսկ Հեղինակը՝ Քրիստինե Ստեփանի Բեգլարյանը, արժանի է իր կողմից հայցվող իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին՝ ԺԲ.00.01 - «Պետության և իրավունքի տեսություն և պատմություն, պետական և իրավական ուսմունքների պատմություն» մասնագիտությամբ:

Առաջատար կազմակերպության կարծիքը Քրիստինե Ստեփանի Բեգլարյանի՝ «Մարդու իրավունքների պահպանության ոլորտում պետության իրավաստեղծ և իրավակիրառ գործունեության տեսաիրավական հիմնախնդիրները (ցեղասպանության դեմ պայքարի համատեքստում)» խորագրով թեկնածուական ատենախոսության վերաբերյալ պատրաստվել է Հայաստանի Հանրապետության ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի պետության և իրավունքի տեսության և սահմանադրական իրավունքի ամբիոնի պետի պարտականությունների կատարող, ոստիկանության փոխգնդապետ Ա. Գ. Սաֆարյանի կողմից:

Քննարկվել և հավանության է արժանացել պետության և իրավունքի տեսության և սահմանադրական իրավունքի ամբիոնի 2021 թ. հունվարի 13-ի նիստում, արձանագրություն թիվ 9:

Ամբիոնի պետի պարտականությունների կատարող,
ոստիկանության փոխգնդապետ _____ Ա. Գ. Սաֆարյան

Ա. Գ. Սաֆարյանի ստորագրությունը հաստատում եմ:

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետի
տեղակալ, ինքը և կադրերի և ԱՀՏԱ բաժնի պետ,
ոստիկանության գնդապետ _____ Գ. Գ. Մալխասյան